ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը Անի Դավոյան, բյուջետային գործընթացի համակարգման վարչության տնտեսագետ

2. Գործուղման վայրը և ժամկետները. Ղազախստանի Հանրապետություն, քաղաք Ալմաթի, 2024 թվականի ապրիլի 15-ից մինչև ապրիլի 19-ը:

3. Հրավիրող կողմը. Արժույթի միջազգային հիմնադրամ:

4. Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).

Գործուղման նպատակն է «Infrastructure Governance/ Ենթակառուցվածքների կառավարում» թեմայով դասընթացին մասնակցելը, որի ընթացքում ներկայացվել են Հանրային ներդրումների կառավարման ոլորտում Կովկասի, Կենտրոնական Ասիայի և Մոնղոլիայի փորձը, մասնավորապես՝ հանրային ներդրումային ծրագրերի ընտրության սկզբունքները, գնահատման փուլերն ու չափորոշիչները, մոնիթորինգի, ռիսկերի և դրանց կառավարման մեխանիզմները, մարմինների ներգրավածության շրջանակը, ինչպես նաև կարողությունների զարգացման հնարավոր մոտեցումները:

5. Քննարկված թեմաները
ա/ Ենթակառուցվածքների կառավարումը տարածաշրջանում՝ պետական ներդրումների գնահատում և արդյունքների վերլուծություն
բ/ Պետական ներդրումների ռազմավարական պլանավորում
գ/ Ենթակառուցվածքների կառավարման ռազմավարությունը և գործիքները, դրանց լավարկման մեխանիզմները, ռիսկերը
դ/ Ենթակառուցվածքների կառավարման արդյունավետության բարձրացման ռազմավարությունը և գործիքները,
ե/ Ծրագրերի կառավարում և մոնիթորինգ:

6. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.

Դասընթացում ընդգրկված թեմաների շրջանակներում իրականացվել են գործնական աշխատանքներ տեսական գիտելիքների պրակտիկ կիրառման նպատակով, իրականացվել են նաև տարբեր խմբային աշխատանքներ, պատրաստվել են շնորհանդեսներ, որով դասընթացի մասնակիցներին և դասընթացավարներին

ներկայացվել են խմբի կողմից կատարված գործնական աշխատանքների քննարկումների արդյունքները:

7. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

Այդպիսիք առկա չեն:

8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Այդպիսիք առկա չեն:

9. Ստորագրությունը, ամսաթիվը:

23 ապրիլ, 2024թ.